



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

10 հունվարի 2011թ.

գ.Հայկասար

Հայկասարի համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքները սահմանել 5-օրյա աշխատանքային շաբաթով: Աշխատանքային օրը սկսվում է 9:00-ին, ավարտվում է 18:00-ին:

Ընդմիջում՝ 13:00-14:00, հանգստյան օրեր՝ շաբաթ և կիրակի:

Հայկասարի համայնքի ղեկավար՝

Հ.Բարսեղյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

16 մայիսի 2011թ.

գ.Հայկասար

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասարի համայնքի բյուջեի ընդհանուր բնույթի այլ մշակութային միջոցառումներ բաժնի 4239 հոդվածից 50.000 դրամ հատկացնել Հայկասարի համայնքում վերջին զանգի միջոցառումը պատշաճ կազմակերպելու համար:

Հայկասարի համայնքի ղեկավար՝

Հ.Բարսեղյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՍՏԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3

14 հունիսի 2011թ.

գ.Հայկասար

**ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ, ՏԱՐՀԱՆՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ և ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով 29.12.1996թ. «Արտակարգ իրավիճակներում պաշտպանության մասին» և 29.03.2002թ. «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայկասար համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման, կազմավորման և իրականացման նպատակով.

1. Ստեղծել.

- 1) քաղաքացիական պաշտպանության շտաբ, շտաբի պետ նշանակել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին և շտաբը համալրել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներով:
- 2) համայնքի տարահանման հանձնաժողով, հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի դպրոցի փոխտնօրենին և հանձնաժողովը համալրել դպրոցի ուսուչկական կազմից:
- 3) քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝
ա/ փրկարարական խումբ 1/9, հրամանատար՝ Վահագն Սարգսյան
բ/ կապի խումբ 1/3 հրամանատար՝ Կարեն Սարգսյան
գ/ քիմիական ճառագայթային դիտարկման կետ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Մանվել Սարգսյան

դ/ անհատական պաշտպանության միջոցների բաշխման խումբ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Մասիս Կարապետյան
ե/ հասարակական կարգի պահպանման խումբ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Վալիկո Գրիգորյան
զ/ գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության խումբ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Պարզև Սանթրոյան

2. Հանձնարարել.

1) քաղաքացիական պաշտպանության շտաբի պետին՝

ա/ քաղաքացիական պաշտպանության կազմավորումները համալրել անձնակազմով, գույքով և տեխնիկայով

բ/ կազմակերպել և իրականացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, կազմավորումների անձնակազմի և բնակչության ուսուցումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30.01.2003թ. թիվ 134-Ն որոշման,

գ/ կազմել և յուրաքանչյուր տարի մինչև հունվարի 1-ը ճշտել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 22.04.2004թ. թիվ 633-Ն որոշման

3. Համայնքապետարանի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելիության:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

Հայկասարի համայնքի ղեկավար՝

Հ.Բարսեղյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4

26 օգոստոսի 2011թ.

գ.Հայկասար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՍԱՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N164-Ն որոշման պահանջները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասարի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասարի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրարի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասարի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» որոշումը:

Հայկասարի համայնքի ղեկավար՝

Հ.Բարսեղյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5

13 սեպտեմբերի 2011թ.

գ.Հայկասար

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասարի համայնքի բյուջեի ընդհանուր բնույթի այլ մշակութային միջոցառումներ բաժնի 4239 հոդվածից 150.000 դրամ հատկացնել Հայկասարի համայնքում անկախության 20 ամյակին նվիրված միջոցառումը պատշաճ կազմակերպելու համար:

Հայկասարի համայնքի ղեկավար՝

Հ.Բարսեղյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՍՏԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6

16 սեպտեմբերի 2011թ.

գ.Հայկասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՍՏԱՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ 2 ՓՈՂՈՑ 2 ՆՐԲԱՆՑՔ ՏՈՒՆ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ /002-002
ԿՈՆՏՈՒՐ, 0.4497ՀԱ/ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԹՈՐԳՈՍ ՍՏՅՈՂԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող թղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտները անվանակոչման անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիադոր մարմնի սահմանելու մասին» թիվ 2387 որոշմամբ.

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասարի համայնքի 2փ. 2 նրբ. տուն 1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Թորգոմ Ստյոպայի Գրիգորյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան և օժանդակ շինությունների և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.4497հա մակերեսով

հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.4497հա մակերեսով հողամասի և նրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Նշված գույքային միավորի նկատմամբ համասեփականատեր հանդիսանում են.

ա/ ինքը՝ Թորգոմ Ստյոպայի Գրիգորյան, ծնվ. 23.09.1982թ., անձնագիր՝ AE 0664628, տրված 14.09.200թ.-ին 028-ի կոդմից:

բ/ կինը՝ Արմինե Ռաֆիկի Պողոսյան, ծնվ. 19.12.1984թ., անձնագիր՝ AF0612820, տրված 27.11.2002թ.ին, 048-ի կոդմից:

3. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արթիկի տարածքային ստորաբաժանման կոդմից:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կոդմից տրված գրավոր հատակագծով:

5. Վերը նշված գույքային միավորին տրամադրել2փ. 2նրբ. տուն 1 հասցեն:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արթիկի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Թորգոմ Ստյոպայի Գրիգորյանի և Արմինե Պողոսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Մնացական Մադոյանի վրա:

Հայկասարի համայնքի ղեկավար՝

Հ.Բարսեղյան

